

ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ

Երբեք ու երբեք չեն տալու

Քոչարյան-Ալին փարիզյան հանդիպման նախօրեին, երբ խոսք է գնում ազատագրված որոշ տարածքներ հանձնելու, խաղաղապահներ տեղակայելու մասին, հասարակական կազմակերպությունները փորձ են անում սթափեցնել Հայաստանի իշխանություններին: Երեկ Մարիոթ հյուրանոցում կայացած «Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը» գրքի շնորհանդեսի ժամանակ մեկ առ մեկ անդրադարձ եղավ ազատագրված տարածքներում հայկական մշակութային կոթողներին, որոնք վկայում են այդ տարածքների հայկական պատմության մասին և որոնք վերակառուցելու քողի տակ ժամանակին Ադրբեջանի ղեկավարությունը փորձել է ոչնչացնել:

Շնորհանդեսին ներկա Սոս Սարգսյանը տարակուսած էր. «Ես չեմ հասկանում, ի՞նչ են բանակցում երկրների նախագահները»: Նրա խոսքերով, մենք բանակցելու բան չունենք, կարողացել ենք վերադարձնել մեզից խլված հողերի ընդամենը մի մասը և «երբեք ու երբեք չենք տալու»: «Մեր ղեկավարները հարցը այդպես կոշտ էլ պիտի դնեն: Մի մետր հող վերադարձնելը նշանակում է ինչ-որ մի բանի սկիզբ, իսկ այդ սկիզբը Հայաստանի կործանումն է», - ի գիտություն Ռոբերտ Քոչարյանի՝ հայտարարեց Սոս Սարգսյանը:

«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» կազմակերպության Երևանյան գրասենյակի տնօրեն Սամվել Կարապետյանը նույնիսկ համոզված էր, որ «երբ մի օր այնքան հիմարանանք, որ էջ ու կեսանոց թղթի դիմաց հող տանք», համաշխարհային հանրությունը մեզ դա թույլ չի տա՝ ասելով՝ իրավունք չունեք, հայ ժողովուրդ, գիջել մեկին, ով նման մշակութային ջարդ է իրականացրել:

«Ազատագրված տարածքների պաշտպանություն» հ/կ քարտուղար Արմեն Աղայանը ավելի հեռու գնաց՝ հայտարարելով, որ հայ ժողովուրդը չունի ազատագրված տարածքները պաշտպանելու ծրագիր. «Նա իրականում ունի Հայաստանի բնական սահմանները՝ Արաքս և Քուռ գետերը ձեռք բերելու ծրագիր»: Իսկ ազատագրված տարածքների խնդիրը այդ ծրագրի մի մասն է: Թեև Արմեն Աղայանը համոզված է, որ Փարիզում ոչ մի փաստաթուղթ էլ չի ստորագրվելու, այնուամենայնիվ նա անհրաժեշտ համարեց հանրությանը տեղեկացնել, որ «Հայաստանի քաղաքական դաշտում ձևավորվել է մի հզոր շերտ, որը անձնական շահագրգռվածություն է դրսևորում տարածքներ գիջելու ու խաղաղապահ ուժեր տեղակայելու հարցում: Ըստ նրա, նման «շահագրգիռ ուժեր» կան նաև դրսում:

«Չեմ կարծում, որ դաիլիճում կա մարդ, որը համակարծիք չէ, որ իրավունք չունենք հանձնելու ոչ մի թիզ հող, և մենք մեղադրում ենք Իլիամ ու Հեյդար Ալիններին: Կներեք, անցյալ տարի մարտի 29-30-ի քննարկմանը ելույթ ունեցավ պաշտպանության նախարարը և հայտարարեց՝ այո, պետք է հանձնենք: Բաց տեքստով, առանց այնայության: Եղ ղեպքում ես չեմ հասկանում, մենք ո՞ւմ դեմ ենք

պայքարում»,-հարց բարձրացրեց ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը:

Ավելի ուշ պատասխանելով «Տարեգիրի» հարցին, «Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմախնդիրը» ժողովածուի խմբագիր, «Հայոց համաշխարհային գործակցություն» հ/կ նախագահ Արմեն Այվազյանը տեսակետ հայտնեց, որ Սերժ Սարգսյանի ու Վարդան Օսկանյանի հայտարարությունները անվտանգության դիմաց տարածքներ զիջելու մասին ավելի շուտ իմիտացիա է, քան մեր պետության դիրքորոշումը. «Բլեֆի դեր ունեցող իմիտացիա: Ես չեմ պնդում, բայց հնարավոր է: Իրենք հույս ունեն, որ Ադրբեջանը կմերժի և իրենք ավելի լավ կդիտվեն միջազգային հանրության կողմից: Բայց եթե նույնիսկ իմիտացիա է, դա մեծ վնաս է հասցնում Հայաստանին»: Ժողովածուի հեղինակին հարց ուղղեցինք, թե իրենց աշխատությունը որքանով կարող է նպաստել այդ իմիտացիայի վերացմանը: «Սա հայ մտքի համախմբում է, որ մեծ օժանդակություն կարող է ցույց տալ և՛ մեր իշխանություններին, և՛ մեր հասարակությանը: Մենք անում ենք այն, ինչ կարող ենք»,- ի պատասխան ասաց ժողովածուի խմբագիրը:

Լրագրողների հետ զրույցում Արմեն Այվազյանը նաև տեսակետ հայտնեց, որ Փարիզում փաստաթղթի ստորագրումը ոչ մի խնդիր չի լուծելու, բացի մի խնդրից. մեզ վրա ավելանալու է ճնշումը: «Մենք դամոկլյան սրի պես այդ մեկ էջանոց փաստաթուղթը մեր գլխին ենք պահելու՝ ասելով, որ սա այն սկզբունքներն են, որոնց շուրջ մենք արդեն համաձայնության ենք եկել. 5 տարածքներից հայկական զորքերի դուրս բերում, ադրբեջանական փախստականների վերադարձ, խաղաղապահ զինուժի մուտք այդ շրջաններ: Երկրորդ փուլում արդեն բանակցություններ կընթանան Լաչին-Քելբաջար շրջանների, Շուշիի վերադարձի մասին»,-ասաց «Հայոց համաշխարհային գործակցություն»-ի նախագահը: Վերջինս համոզված է, որ ԼՂ հարցը գտել է իր լուծումը դեռ 12 տարի առաջ. «Լուծումը եղել է, այլ լուծում ակնկալել անհնար է: Մենք պետք է պատրաստ լինենք տարիներով և տասնամյակներով դիմակայել»: Այդ դեպքում կկարողանա՞նք տնտեսապես գոյատևել: Մեր այս հարցին ի պատասխան հ/կ նախագահը վստահ հակադարձեց. «Ինչո՞ւ ոչ, այստեղ ոչ միայն տնտեսական, հազար ծնով կարելի է գոյատևել»:

ՄԱՐԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

ԶՐՈՅԱԿԱՆ

Բացարձակ անտեղյակ

Վերջերս Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի նիստի ժամանակ ԼՂ երեք պատգամավորներ փորձել են քննարկման առարկա դարձնել հատկապես վերջերս ակտիվ շրջանառվող ԼՂ կից ազատագրված տարածքները հանձնելու ու խաղաղապահներ տեղակայելու հարցը, սակայն ԼՂ խորհրդարանը հրաժարվել է քննարկել այն: Խորհրդարանականները նպատակահարմար են գտել հարցը քննարկել ոչ թե ԱԺ նիստում, այլ ընդհանուր ժողովում: Խոստացված ժողովի մասին մինչ այժմ տեղեկություն չկա:

Վերոնշյալի մասին երեկ Մարիոթ հյուրանոցում կայացած «Հայաստանի

ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը» գրքի շնորհանդեսի ժամանակ ունեցած ելույթում հանրությանը տեղեկացրեց քաղաքագետ Իգոր Մուրադյանը: «Ղարաբաղի խորհրդարանը գրո է, լրիվ գրո: Որոշ իմաստով դա քաղաքական հանցագործների հավաքածու է: Նույնիսկ այդպես անվանել չի կարելի: Ղա հավաքածու է ոչնչի ու ոչ մեկի: Ղրանից սպասել ոչինչ պետք չէ», - ԼՂ խորհրդարանի ֆորպոստային վիճակին կոշտ գնահատական տվեց քաղաքագետը՝ ավելացնելով, «Ղարաբաղի նախագահը բացարձակ անտեղյակ մարդ է: Ունի ավելի քիչ տեղեկություն, քան Երևանի ծառայողական մեքենաների վարորդները»: Իգոր Մուրադյանի խոսքերով, ԼՂ քաղաքական ղեկավարությունը, եթե այն ընդհանրապես կա, փոխել է արտաքին քաղաքականություն իրականացնելու իր իրավունքը տնտեսական գործունեությամբ զբաղվելու բարենպաստ պայմանների հետ ու չի պայքարում այդ իրավունքի վերագտման համար:

«Մեծ հաշվով, գործը տանուլ է տված (ԼՂ հարցը-Մ.Խ.): Ընդ որում, ամենահարմար պատմական պայմաններում, երբ ոչ ոք չի էլ պատրաստվում կարգավորել այդ հարցը, ոչ մեկի դա պետք չէ, ամբողջ այս աղմուկի նպատակը արդյունքը չէ: Օսկանյանի ղեկավարած մարմինը կմեռնի, բայց չի հասկանա դա երբեք, որովհետև նրանք ուղղակի չեն զբաղվում իրենց գործով: Նրանք անտեղյակ մարդիկ են և ընդհանրապես այստեղ չկան տեղեկացված մարդիկ», - բողոքեց քաղաքագետը՝ համոզմունք հայտնելով, որ ոչ ոքի պետք չէ Ղարաբաղը, «պետք է աշխարհաքաղաքական կուրսի արմատական փոփոխություն»:

Մ.Խ.